

Լուսմ երբ, որ Պուշկինի յօրեկանին առ-
թով Քիֆլինի Հայոց Հրատարակական ընկերո-
թյանը որոշվե է հրատարակել Պուշկինի կենսա-
գրութիւնը ե կազմել նրա ոտանաւորներէյ
արձակ գրութանընկերից մի հատոր: Այլ հատոր
մէջ կը ժամեն մէջ ալն ոտանաւորները, որոն-
ցանման ժամանակներ թարգմանուած են եր-
եւ լոյս են տեսել մեր պարբերական հրատարա-
կութիւններէ մէջ ե թէ մի քանի նոր թարգմա-
նութիւններ, որ մինչեւ այժմ դեռ ոչ մի տե-

հրատարակված չեն եղել: Այդ հատորը պատ-
րաստ պէտք է լինի մինչև մայիս ամսի կէտը,
երբ նշանակված են յօրեւանական տօնախմ-
բութիւնները:

Հողային կալուածք ունեցողներին իրաւունք է
տրված Ռուսաստանում յետ գնել իրանց այն
տունական կալուածքները, որոնք բնակվում է
գիւղական ժողովուրդի կառավարչ սենատը
մի քանի տարի սրանից առաջ բացատրեց, որ
այն հողերը, որոնք արդէն յետ են գնված, այլ
ևս չեն կարող համարվել բնակեցրած, որովհետեւ
այլ ևս չեն պատկանում կալուածատէրին և նրա
ու գիւղացիներին մէջ հաշիւը վերջացած է: Այ-
ժմ, ինչպէս հաղորդում են լրագիրները, Պե-
տերբուրգի ազնուականութիւնը որոշել է խնդ-
րամատոյց լինել կառավարութեան՝ ընդարձակել
կալուածատէրերի իրաւունքը և թոյլ տալ, որ
նրանք կարողանան յետ գնել ամեն տեսակ
հողեր, որ մի ժամանակ պատկանում է եղել նը-
րանց: Սակայն հազիւ թէ այդ անհամակրելի
խնդրքը յարգվի բարձր շրջաններում:

Երկաթուղու վարչութիւնը, աչքի առաջ ունե-
նալով, որ երկաթուղու վրա ծառայութիւնը
պահանջում է վերին աստիճանի արթնութիւն,
յայտնի աշխոյժ և ճարտիւրութիւն, որոշել է ծա-
ռայող չընդունել հասակի առած մարդկանց,
բայց հասել է չափազանցութեան. նա նշանակել
է ծառայութեան հասակը մինչև քառասուն տա-
րին:

Միախոտագործութեան վերաբերեալ փորձեր
անելու նպատակով գոյութիւն ունեն կողմա-
սում երկու փորձնական կայարաններ, մէկը Սո-
չիում, իսկ միւսը Սիմաիսի գաւառում: Այժմ
երկրագործութեան միջնորդութիւնը որոշում է
Փոթիայի նահանգում մի յարմար տեղ՝ երրորդ
փորձնական կայարան հիմնելու նպատակով:

«Մշակ» խմբագրութեան մէջ երբեմնապէս
ստացվում են նամակներ՝ յանձնելու խմբագրու-
թիւնից դուրս գտնվող, կամ նոյն իսկ անծա-
նօթ մարդկանց: Անհրաժեշտ ենք համարում
յայտնել, որ նամակներ հասցնելու յանձնարա-
րութիւններ մենք չենք ընդունում, ուստի այդ-
պիսի նամակները կը վերադարձնվեն պոստային
վարչութեան, իսկ եթէ ամփոփված կը լինեն
խմբագրութեան անունով ծրարներին մէջ՝ անմի-
ջապէս կը պատուին և զամբել կը դնվեն:

Պետերբուրգի «Торгово-Промышленная Газета»
լրագիրը հաղորդում է, որ երկրագործութեան
միջնորդութիւնը մտադիր է ներկայ 1899 թիւին
հարկային տեսուչ Լ. Ղուկասեանի ղեկավարու-
թեամբ, շարունակել Արաքսային գաւառում
այն փորձերը, որ կատարվում են գիւղական հո-
ղերի վրա, աւելացնելով դարձեալ տասն փորձ-
նական հողաբաժիններ: Անցեալ 1898 թիւին
փորձեր արվել են 14 կտոր հողի վրա 13 գիւ-
ղում: Քիւղայինները հետաքրքրված են գիւղա-
պատկան կալուածային փորձերով և միտք է ծագել
բանալու դաւառում սերմայտի փորձիկ պա-
հեստ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Թ Ի Ի Բ Ի Ա

«Polit. Corr.» լրագիրը արձանակաւ պարա-
զուիններ յայտնի ժողովի մասին այն ձևով է
պատմում, որ Բ. Դրան մասնակցութիւնը այդ
գործում ակնյայտնի է երևում: Արաքսայինների
առաջին նիստի նախընթաց օրը Կ. Պոլսից և-
կան թիւրքաց զօրքի կապիտան Վուրթէն-էֆեն-
դի (Իպէկի արքանացի), ինչպէս ասում են, նա-
մակներով և հրահանգներով իշխող-Քիւսիկից
Նիստերը տեղի ունէին մզկիթում, որի դռները
պահպանում էին թիւրքաց զօրքերը: Նրանք ընդ-
հանուր նիստերից յետոյ, յունվարի 16-ին ցե-
րեկվայ նիստ չը կար, կայացաւ միայն մի
գաղտնի նիստ, որին ներկայ էին մի-մի ներկա-
յացողից իւրաքանչիւր բաղադրեց կամ չըմանից:
Այդ նիստի մէջ կտրական վիճիւններ ընդունի-
ցին: Հետեւեալ օրը արգաքանկութիւնը հրաւիր-
ված էր ժամապաշտութեանը Ռամադանի մզկիթը:
Ժամապաշտութիւնից յետոյ հրացանաձգութիւն
սկսեցին, որ շարունակվեց մէկ ժամ:

Արաքսային պարագլուխները իրանց վճիռ-
ների մէջ յայտնում են, թէ պատրաստ են դնե-
լը ձեռքին պաշտպանել իրանց հողի ամեն մի
կտորը և չը թոյլ տալ որ և է նորմալութիւն վար-
չութեան մէջ: Ժողովը ընդունեց էր և այն հար-
ցը, թէ արաքսայինները ինչպէս պէտք է դիմա-
դրեն, եթէ մակեղօնական կոմիտէն արգաքան-
կութիւն սկսի: Ժողովը այդ դէպքի համար

վճուց առաջարկել Բ. Դրանը 17-ից մինչև 20
հազար օգնական զօրք, այն պայմանով, որ նը-
րանք արաքսային հրամանատարների իշխանու-
թեան տակ գտնվեն:

Ժողովի գլուխ էր կանգնած արաքսային
յայտնի պարագլուխ Մուլլա-Ջէկա, որը 1893
թիւին Վուրթէն-էֆենդիի միջոցով Կ. Պոլսի
կանչվեց: Վիճաբանութիւնների ժամանակ Մուլ-
լա-Ջէկա յայտնեց, որ սուլթանի անունից իրան
կապորտութիւն տուեցին յայտնելու դէպք տալ և
կապարեկապէս զինատուրել արաքսայիններին: Նրեք
օրվայ ընթացքում—ասեց նա—դէնքը և պատե-
րազմական միջոցները կը ստացվեն Պրիշտե-
նում, Միարովիցայում և էլի երկու ուրիշ կէտե-
րում:

«Neue Freie Presse» լրագրի Կ. Պոլսի թըղ-
թակիցը այդ ժողովը ուղղակի անուանում է
մահապառնակ ինքնաճանաչութիւնը զարկեցնելու
համար Բ. Դրան սարքած մի փորձ՝ քրիստոնէս-
կան տարրը վախեցնելու և Մակեղօնայի յեղա-
փոխական ձգտումները զսպելու նպատակով:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԳԻՍՏԻՑ

Տրապիզոնից, յունվարի 24-ին
Տրապիզոնից ալ ունեցած է իր հայունեաց ըն-
կերութիւնը, որը սկսեց 1895 թուի դէպքերու
բերումը ժամանակ մը դադարեցաւ: Փաղարի
խաղաղութիւնը վերահաստատվելով, զարթոյ-
ները սկսան մաս-մաս վերադառնալ, որով 97
թիւ վերջեր կարելի եղաւ վերակազմել Հայու-
նեաց ընկերութիւնը, որ սկսած է նախկին ծը-
րարով ու եռանդով գործել: Ընկերութեան ներ-
կայ գործունէութեան անցնելէ առաջ, աւելորդ
չի լինի կարծեմ ակնարկ մը ձգել անոր ան-
ցաւին վրա:

Տրապիզոնի մէջ առաջին հայունեաց ընկերու-
թիւնը 1882 թիւին հիմնուեցաւ, առաջնորդ
Մատթէոս եպիսկոպոսի նախաձեռնութեամբ:
որով ծրարի չունէր. նպատակն էր ազգային
կալուածներ աւելացնել և այդպիսով աջակցել
ուսումնարանական գործին. բայց միայն երկու
տարի գոյութիւն ունեցաւ և անդամութիւններու
տղիտութեան ու ներքին անհամաձայնութեան
պատճառով կազմալուծուեց, թողլով բաւա-
սուն լրբայի գումար մը, որը մինչև վերջ պա-
հեստի կը մնար Աղնաուրեան եղբայրներու մօտ:
1894 թիւին թիւրք վաշխառու Նէմիօղլիներու
մասնաւոր թշնամութեամբ Աղնաուրեան առեւտ-
րական տունը բոլորովին կործանուեցաւ, թաղե-
լով իր փրկատակներու տակի ի միջի այլոց նաև
յիշուած 40 լրբայ: Այդ ընկերութիւնէն իբրև
զոյք մնաց միայն մետաքսէ մի սաւան (կանանց
զգիւն) և մի մաշուած կարի մեքենայ:

Զորս տարվայ մեծելութենէ յետոյ, 1888-ին,
նախաձեռնութեամբ օր.օր. Մադիսալեան, Թուշ-
պուլեան և Սակալեան ուսուցչութիւններ, կազ-
մուեցաւ «Աղքատաբերաց ընկերութեան» անու-
նով մի ընկերութիւն, որը մի տարվայ մէջ ու-
նեցաւ միայն 49 անդամ. անդամավճար նշա-
նակուած էր ամսական 1 դրուշ (8 կօպէկ): Կա-
նոնադրելը շատ սահմանափակ էր, այնպէս որ
ընկերութեան ամբողջ գործունէութիւնը պիտի
լինէր աղքատ և անօգնական աշակերտութիւններու
միայն հազուադէպ և դպրոցական կարիքները հո-
գալ: Սկզբները թէև մեծ ընդունելութիւն չը
գտաւ կանանց շրջանի մէջ, բայց շնորհիւ ե-
ռանդուն գործիչներու, նախորդ ընկերութեան
բայցայումէն առաջ եկած անպատու տպաւորու-
թիւնը անհետացաւ և գործը աւելի հաստատ
հիմքերու վրա դրուեցաւ: 1891-ին դպրոցի տե-
սուչ Յ. Սուսուֆեան աւելի լայն ծրարքի մը
առաջարկեց, որով ընկերութիւնը իր օգնութիւ-
նը պիտի տարածէր նոյնպէս տղայոց և յետոյ
կարծու հայ գիւղերու վրա: Առաջարկը ընդուն-
ուեցաւ և այդ ժամանակ ընկերութիւնը վերջնա-
կանապէս «Հայունեաց» անունը առաւ: 1894-ին,
Յ. Շահրիբեանի առաջարկութեամբ, յիշեալ կա-
նոնադրելը բարեփոխեցաւ, նպատակին աւել-
ցնելով «Ընկերացարկութիւն տարածել հայ հա-
մարակութեան (կանանց) մէջ և թաղային օ-
ժանդակ մասնախմբեր կազմել այդ նպատակով»:
Հայունեաց ընկերութեան ամենափայլուն ժա-
մանակը կարելի է 1894—95 տարին համարել:
Բաժանորդութեան թիւն էր 192 հոգի 233 բա-
ժիններով: Իր հասոյթի գլխաւոր աղբիւրները
եղած են բաժնեկիցիները, վիճակահանութիւն,
նուէրներ և այլն:

Ինչպէս կը տեսնուի, Հայունեաց ընկերու-
թիւնը շատ սահմանափակ գործունէութիւն մ'ու-
նեցած է: Թէև կանոնադրին մէջ դադարաբա-
կան յառաջդիմութիւն կրած է, բայց, դժբաղա-
բար, գործունէութիւնը գրեթէ մի և նոյն է մնա-
ցել՝ երկսեռ աշակերտներու զգեստ և ուսում-
նարանական պէտքեր մատակարարելով միայն:
Իր ամենազլաւոր նպատակները՝ ընթերցարան

ութիւն տարածել կանանց մէջ և գիւղերու
դպրոցական գործին օգնել, ընաւ չէ իրագոր-
ծած: Այժմ միայն երկու ուսուցչութիւններու ա-
ռաջնորդութեամբ մի տեսակ ընթերցարան-
լարան հիմնած են աղջկանց վարժարանի մէջ:
Կիրակի օրերը 20—25 նորահաս օրիորդներ կը
հաւաքուին, կը կարդան արտօնուած թերթեր և
կը վիճաբանեն. մտադիր են դասախօսութիւն-
ներ ալ կազմել: Ուսումնական խորհուրդը պաշ-
տօնապէս դժեով այդ հաւաքման պարագաները՝
արտօնեց այդ բանը:

Հայունեաց ընկերութեան անցեալ նիստը գոր-
ծունէութեան պատճառ ոչ միայն անպատու
պայմաններն էին, այլ և այն, որ ընկերութեան
գեկավարները գրեթէ ուսուցչութիւններ եղել են,
ասոնք մինչև վերջը նուիրուած լինելով իրենց
պաշտօնին, քնակաւարար չէին կարող մեծ ծա-
ւալ տալ Հայունեաց ընկերութեան: Բայց մի
քանի ուսուցչութիւններէն, Տրապիզոնի հայունեա-
նէրը չը տուին ուժեղ գործիչներ, որոնք արա-
քանցիւղ ասիական նկատումները, հոգով սըր-
տով նուիրուէին բարի գործերու: Գործադիր ժո-
ղովներու եկող գնացող անդամութիւններ գրեթէ
ձևակաւորէին կատարներ են իրենց պաշտօնը: Ե-
րեւոսաբնակութիւնը, տղամարդ գործիչներ միշտ
համակրանքով վերաբերուել են Հայունեաց ըն-
կերութեան, բայց սա անբացատրելի պատուա-
սիրութեամբ մը միշտ իր հաւաքումներու զու-
նները դոց պահած է անոնց առաջ: Հարեմական
կապանքներէ բոլորովին ազատ չը պահելով
զիրենք, մեր հայունեաները խոյս տուած են ա-
զատ ընդհարմարութենէ և այդպիսով կազմալու-
ծած են իրենց գործունէութիւնը: Մի շարք հե-
տաբերական ընդհարումներ տեղի ունեցել են
նախորդ ընդհանուր ժողովներու մէջ, բայց միշտ
մոլթ մնացել են ամեն անոնց, որոնք... ուհի
մնեաւ արտօնութիւնը չեն ունեցած: Խորհուրդ
կուտանք մեր հայունեաներուն, մասնաւոր տի-
կիւններուն, միանգամ ընդ միշտ դէն նետել այդ
հինցած ամօթնաժողովին ու պատուասիրու-
թիւնը, եթէ իրօք չեն ուզել կաստ դառնալ:

Ամսուս 17-ին ընդհանուր ժողով տեղի ունե-
ցաւ. այս նիստը հետաքրքրական էր նրանով,
որ անդամութիւններու մեծ մասը ներկայ էր և
մինչև իսկ կաթողիկ օրիորդներ եկել էին, ինչ
որ նշանակելի դէպք մէ մեզ համար: Կաթո-
լիկ հայունեաները ընդհանրապէս սնած ու զար-
գացած մայրապետներու կերական նեղ միջո-
րդի մէջ, միշտ զիրենք (հաղադիւտ բացա-
ռութեամբ) հեռու պահած են աղակից հայու-
նէրներու գործունէութենէն, չը նայած որ այս
վերջինները ընաւ կարևորութիւն չեն տուած
կրօնական խորութեան և այդ մասին միշտ զու-
նները լայն բացած են: 1893 թուի տեղեկագրէն
կերելի թէ ընկերութիւնը զուտ մուտք ունեցած
է բաժանորդագին, նուիրատուութիւն, սուկու 2609
դրուշ, իր պահեստի 30 ոսկեղ գումարէն նոյն-
պէս 10 ոսկի առած է, իսկ երբ՝ զգեստներու,
ուսումնական պէտքերու, փոստը—3331 դրուշ—
1898-ի բաժանորդագինէն ապառիկ մնացած է
624 դրուշ, կանխիկ փող 358 դրուշ: Ընկերու-
թիւնը իր գոյութեան ընթացքի մէջ այս տարի
ամենաշատ նուէրը ստացած է—1516 դրուշ,
որու մի խոշոր մասը Ռուսաստանէն՝ մի քանի
բարեսէր կիցներէ: Դրանք էլ այն կ'ուր, որ 1898
տարեւը բաժնեկիցներու կէսը անգանձելի մնա-
ցած է. այդ անհաճոյ պարագան արդեօք չըս-
տարութեան արդիւնք է, թէ անհոգութեան, չը
կրցանք հասնալ: Ներկայիս մէջ մեր միակ մի-
թարութիւնը բարեկարգ դպրոցներն ու հայու-
նեաց գործունէութիւնն է: Այլքան ընդհանուր
նիստէն և մասնաւոր 1895-ի դէպքերէն յետոյ,
եթէ դարձեալ հայունեաներ ինքնաբերաբար
խմբուեցան և սկսան գործել, դա կապացուցանէ
որ մեր իրական սեռի մէջ հաստատ արմատ
ձգած է գործելու գաղափարն ու սէրը, դա կը
հաստատէ որ մեր կիցները ընդունակ են աւելի
առաջ գնալու, եթէ բարոյապէս և նվիրապէս
աջակցին ունենան: Միայն յաջողութիւն մաղ-
թի չը բուռն, պէտք է իրապէս օգնել և գոր-
ծով քաջակերել հայունեաներու զոգողը բալլերը:
Վալի Գաւորի պէջ այս անգամ ալ յաղթութեամբ
եղաւ ընդհանուր մէջ. հակառակ Հաթիբը նոր
պաշտօն առած և հեռացած է: Նոր թղուկ հա-
թիբ մ'ալ այստեղ եկաւ:

Տեղացի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— «Прав. Вѣстникъ» լրագրի պաշտօնական
հաղորդագրութիւնը մակեղօնական հարցի վե-
րաբերմամբ մեծ տպաւորութիւն գործեց Բօլ-
գարկայում և մակեղօնական բողոքների օր-
դան «Ворда» լրագիրը նկատում է, որ ռուսաց
լրագրի հաղորդագրութիւնը պէտք է այնպէս հաս-
կանալ, թէ Ռուսաստանը կատարեալապէս համոզ-
ված է, որ չուսով ընթերցանել կը մոյջվին Մա-

կեղօնայում: Բայց որովհետեւ Թիւրքիան կամաւո-
րապէս երբեք ոչինչ չէ արել իր քրիստոնեայ հպա-
տակներին վիճակը բարւոքելու համար, այդ պատճա-
ռով լրագիրը այն եղբակացութեան է գալիս, որ
ընթերցանելու մոյջնելու վրա չ'ենք Ռուսաստանն է
պնդում: Յիշելով Ռուսաստանի ազատութեան
մասին, «Ворда» լրագիրը հրաւիրում է բոլոր
մակեղօնացիներին համբերութեամբ սպասել ի-
րանց վիճակի բարւոքմանը Ռուսաստանի զօրեղ
աջակցութեամբ:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 փետրվարի: Փետրվարի
11-ին, առաւօտեան 11 ժամին, կաթողիկ եկե-
ղեցում կատարվեց հոգեհանգիստ հանրապետու-
թեան վախճանված նախագահի համար: Եկեղե-
ցում ներկայ էին Թագաւոր Կայսրը, Մեծ Իշ-
խանները, Մեծ Իշխանութիւնները, օտար գիւղ-
մատիական մարմինը, դեսպանները, ֆրանսիա-
կան կօթնիայի անդամները:

Փետրվարի 10-ի դիշերը հրեհ սկսվեց «Новаа
Багарія» գործարանում. վնասը 200 հազար ռուբ-
լի է: Հրդեհը, սակայն, չը կանգնեցրեց գործա-
րան աշխատանքի ընթացքը:

ՄՕՍԿԱ, 11 փետրվարի: Այսօր ֆրանսիա-
կան եկեղեցում հոգեհանգիստ կատարվեց նա-
խագահ Փօրի համար: Պատարագին ներկայ էին
դեմոկրատները, վարչութեան և դասակարգերի
ներկայացուցիչները, բոլոր օտար հիւպատոս-
ները:

ՊԱՐԻՑ, 11 փետրվարի: Այսօր առաւօտեան
իշխան Ուրուսով, կատարելով Ռուսաց Միապե-
տի հրամանը, Նիւսեան պալատում մի ահազին,
հոյակապ պսակ դրեց նախագահ Փօրի դագաղի
վրա: Պակը բաղկացած էր միմօզաներից և
զարդարված էր մանուշակի շքեղ փնջիկներով
Սան-Րէմօից: Պակի սև թաշկալ ժապաւէնի
վրա գրված է. «Համայն Ռուսաստանի Կայսրը
և Կայսրուհին»:

ՐՈՒՐԱՊԵՏ, 11 փետրվարի: Դիմադրական
կուսակցութեան և Սէլլի մէջ համաձայնութիւն
կայացաւ բոլոր վիճելի կէտերի վերաբերմամբ:
Կօմպրօմիսը կապված է: Պարլամենտական գոր-
ծավարութիւնը այն մտքով է փոխվում, որպէս
զի տեխնիկական ձգձգումը անհրաժեշտ դառնալ:
Սէլլ համաձայնվեց ընտրութեան ազատութիւնը
ապահովելու վերաբերեալ օրէնքները մի փոքր
փոխել: Միևնուրեքի ցուցակը կը ներկայացվի
կայսրին կիրակի:

ՎԻԵՆՆԱ, 11 փետրվարի: Բոլոր լրագիրնե-
րը միաձայն հաղորդում են, որ նոր միևնու-
րութիւնը բաղկացած է բացառապէս ազատա-
միտներից:

Լուրերին նայելով, արդարադատութեան մի-
նիստը կը լինի Պօս, ներքին գործերի—Սէլլ
կամ Բէնցէլի, մնացածները նախկիններն են:

ՊԱՐԻՑ, 11 փետրվարի: Առաւօտանից ահազին
խմբեր են կանգնած բոլոր փողոցների վրա Նիւսեան
պալատի առջև մինչև Notre-Dame տաճարը: Նի-
սեան դաշտերը և համաձայնութեան հրապա-
րակը ծածկված են ամբողջով: Տիւրքի տէրա-
սան յատկացրված է պատգամաւորների, սենա-
տորների և մամուլի ներկայացուցիչների ընտա-
նիքների համար: Ամբողջ հանդիս է: Նրանում
է, որ կը պահպանվի կատարեալ հանգստու-
թիւն: Նրանք կը գեղեցիկ է: Մօտ 9 ժամի գոյրե-
րը երկշար դեմոկրատիկ յուզարկաւորութեան ամ-
բողջ ճանապարհի վրա: Հետաքրքրիչները կանգ-
նեցին զօրքերի ետևը: «Հայրենասէրների լի-
գան» տեղափոխվեց Համաձայնութեան հրա-
պարակի վրա և նոյնպէս հանգիստ է: Իշխա-
նութիւնները հաւաքվում են Նիւսեան պա-
լատի մօտ: Վճառքի առեանի առաջ ցույցեր
չը կային: 9 ժամին 50 րօպէին Ցուրլիդէն, իր
չտաքի ուղեկցութեամբ, եկա Նիւսեան պալատի
մօտ, սրով պատիւ տուեց, որով և հանդիսի պու-
կանգնեց: 9 ժամ 55 րօպէին եկա պատգամա-
ւորների ժողովը, իսկ 10 ժամին, բայց կառուով,
—Լուրէ: Ամբողջ պատկառմանով ողջունեց
նրան. փողեր հնչեցին, թմբուկներ սկսեցին զար-
նել, Լուրէ մտաւ Նիւսեան պալատի բաղրը: Ցու-
ղաբեւութիւնը կաղմակեղծվեց և տեղից
չարժեց:

ՊԱՐԻՑ, 11 փետրվարի: Թագմանը ճառեր
արտասանեցին՝ Պրանկ Ծօֆօ, որը նկարագրեց
Փօրի կեանքը, գովառանքով խօսեց նրա ան-
կողմնապահութեան մասին: Ներքին քաղաքակա-
նութեան մէջ, մասնաւորեց արեց նրա դերը նը-
շանակութեան վրա ֆրանս-ռուսական դաշնակ-
ցութեան մէջ, ինչեցրեց Ռուսաց Կայսրի Պրան-
սիան այցելելու մասին, Փօրի Ռուսաստան դը-
նալու մասին, այդ անցքերը մշտապէս կը պահեն
Փօրին Պրանսիայի յիշողութեան մէջ: Դէշանէլ
խօսեց Փօրի բարեբաւութեան, նրա մարդկա-

ՊԱՐԻԶ, 12 ինտրվարի Հանրապետության նախագահը այսօր ունիդորթեան ընդունաւ ռուսաց զինուորական միտան, զենեալ Բլդերմանի առաջնորդութեամբ, որ եկել է Նոյմեմբերի անունից Ֆորի թաղմանը: Հէյսթօր էլ նախագահն ընդունեց ծովագետ Սկրլովին, որը, Քաղաքը Վայսրի հրամանով, եկել որդէս ռուսաց նաւատորմի ներկայացուցչութեամբ Նախդոցեալ նախագահի դադաւմալ բը շքեղ պահկ զբեց ռուսաց նաւատորմի կողմից: Վարսիական կառավարութիւն

ՊԱՐԻԶ, 12 փետրվարի։ Քաղաքի վերադա-
նող հնդկերից մեկը անցնում էր Ազգային հրե-
պարանոյ, ուր ահալին բազմութեամբ հաւա-
կեցին հայրենասէրներ լիզայի անդամներ
Վերքինները ուղեկցում էին հնդկն մինչև Նէ-
զորանոցները կկցեց զորքը՝ աղաղակելով։
Եւրոպայի անողորմ ընդուն են զինուորն
ձեռքերը և կամենում են մտնել զօրանոցն
Բայց այնտեղ կարողացաւ մտնել միայն Գ

ՊԱՐԻՋ, 12 փետրվարի: Պոստսովիեր բուլվար
բի վրա 11 ժամ 30 րոպեին մի քանի կուլանե
կգան: Ոստիկանությունը ցրվեց ցույց անողին
ՆԵՐՍԻՍԵԱՆ ԷՍՅՈՑ ՀՈԳԵՒՐ ԴՊՐԱՆ
փետրվար ամսի 17-ին, երեկոյան ժամի
դպրոցի 21 կրպակները, նկուղներով, որ զ
թեան զէմը, Կուլանէշի: փողոցում: Պայման
թեան զւանաւորան մէջ ամեն օր, բացի ս
(Յ. Ե.)

ՄԱՌԻԻԴ, 12 հետրվարի: Աւմէնաւ հրաժար-
վեց մենամարտել Լինարէսի հետ և յայտնեց,
որ կը շարունակի սենատում գնեւերալների ղէմ
սկսված ազիտացիան:

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴԻ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակող՝ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԺԱՌԱՆԳՆԵՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՅԻ Հոգաբարձութեան խորհրդարանում պա-
փետրվար ամսի 17-ին, երեկոյեան ժամի 7-ին, կը լինի աճուրդ՝ կապարով տալու
դպրոցի 21 կրպակները, նկուզներով, որ զտնվում են Ներսիսեան դպրոցի Հին շինու-
թեան դէմը, Կուզնէնի փողոցում: Պայմանաթուզլքը կարելի է տեսնել Հոգաբարձու-
թեան զիւանաւորան մէջ ամեն օր, բացի տօներէից, առաւօտեան 10—1 ժամը:

(2. հ.) 1—2

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ (Փ/Թօօվի Թաառօն)
Կ ի ը ա կ ի, Կ ե տ ր զ ա ը ի 14-ին,

Հայ գերաստական խմբի անդամները ժամանակցութեամբ սիրողների կը ներկայացնեն
Յօգուտ Թիֆլիսի թեաւական դպրոցի չքաւոր
աշակերտներին

I

ԱՆՄԵՂ ՄԵՂԱԽՈՐՆԵՐ

Կոմերիա 4 գործ., Հեղ. Օստրոյսկու:

Մասնակցու են ուտ. Զաբէլ, Ղևոնդեան, Լուսինեան, Մատինեան. պ.պ. Տէր-Դաւթեան, Մի-
ռադեան, Խարազեան, Գառնի, Յարութիան Թումանեան, Միրզոյեան և ուրիշները:

II

Պ Ա Ր Ա Հ Ա Ն Դ Է Ս

Տոմսակները վաճառվում են ՏԵՐ-Սարգսեանի մազազինում (Գլխորդապա փողոց), իսկ ներկայացման օրը առաւօտեան 12 ժամից մինչ 2-ը և երեկոյեան 5 ժամից՝ Արտիստական ընկերութեան դահլիճի կառավարման Սկիզբը երեկոյեան ժամի 8-ին

2—2

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C^{ie}
 ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
 Ն. ՊԱՊԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷՆԼԻՅՑ ԲԱՌՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիօրէջ:

[illegible]

Բարձրագույն և ճանապարհորդության մասին հարգելի անգիտությունները
 թող լարե՛նան զիմե՛ն ընկերու՛կնան գործակատարներին՝
 ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արսոյն, Նարբե՛ժմայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդա՛յ
 նեան՛ին, Սյոնի՛ փող. Խօպա՛դարու՛սով և Մալու՛րա՛նէ քարվանսարա: ԲԱԳՈՒ—պ. Ս. Կիլլաբա՛նին
 Կորնեա՛կնանայա՛ Տրապա՛րակ: ԵՍՎՈՐՍՍԻՅՍՎ—պ. Միլիտո՛ր Հեքչե՛ղոբերին՝
 (և. հ. չ.)

18—20

Доволнено пензурою, Тифлисъ, 12 Феврала 1899 г.

Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13.